ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

07-ը հոկտեմբերի 2024թ.

Շնորհավորական ուղերձ Հոկտեմբերի 7-ի՝
Գրադարանավարի մասնագիտական օրվա առիթով

Արդեն 20 տարի Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հոկտեմբերի 7-ին նշում ենք Գրադարանավարի օրը:
Գրադարանը կրթական, մշակութային դաստիարակչական գործում անփոխարինելի տեղ և կարևոր նշանակություն ունեցող հաստատություն է, որը արդի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ հաղթահարում է մարտահրավերներ՝ երիտասարդ սերնդի շրջանում բարձրացնելով գրքի ու ընթերցանության առանցքային դերը:

Մասնագիտական տոնի առիթով ջերմորեն շնորհավորում եմ Աբովյանի համայնքային գրադարանի և գյուղական բնակավայրերի գրադարանների աշխատակիցներին:

Սիրելի՛ գրադարանավարներ.

Նկատելի և գնահատելի է ձեր նվիրումով աշխատանքը. ձեր շնորհիվ մեր համայնքի գրադարանները ծառայում են որպես մշակութային, կրթական ակտիվ կենտրոններ, ամենատարբեր ծրագրերով ընդունում դասարաններ, հյուրեր, խրախուսում ընթերցասեր հանրությանն ու նպաստում ընթերցանության մակարդակի բարձրացմանը:

Ոլորտի խնդիրները մեր ուշադրության կենտրոնում են, շարունակելու ենք հարստացնել գրադարանը նոր հրատարակվող և ընթերցողների կողմից պահանջված գրքերով:

Կրկին շնորհավորում եմ բոլոր գրադարանավարներին մասնագիտական տոնի առթիվ, մաղթում եմ հաջողություններ նվիրական աշխատանքում և բոլոր նախաձեռնություններում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ